



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք  
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 126**  
16 օգոստոսի 2013 թվական

**ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՀԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ  
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քննարկելով Մարալիկ քաղաքի Շիրակացի փողոցի թիվ 73 հասցեի բնակիչ Վահան Անդրանիկի Սահակյանի 14.08.2013 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր հոր՝ հանգուցյալ Անդրանիկ Շիրակի Սահակյանի կողմից 1973 թվականին ք. Մարալիկ Շիրակացի փողոցի թիվ 73 հասցեում կառուցվել է բնակելի տուն և օժանդակ շինություններ, սակայն իրավունքը հաստատող փաստաթղթեր չեն պահպանվել, միաժամանակ օրինական հատկացված 0.06 հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.0285 հա հողամաս, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37 հոդվածի դրույթներով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տներին կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածի դրույթներով **որոշում էմ՝**

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Վահան Անդրանիկի Սահակյանի (ծնված 1979թ.) ք. Մարալիկ Շիրակացի թիվ 73 հասցեում հանգուցյալ հոր՝ Անդրանիկ Շիրակի Սահակյանի կողմից 1973 թվականին կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների, ինչպես նաև օրինական հատկացված 0.06 հա հողամասի, <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տներին կարգավիճակի վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն 0.0285 հա անհատույց հատկացված հողամասի գույքային իրավունքները վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում պետական գրանցում կատարելու նպատակով:

**Քաղաքապետ՝**

**ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**